**ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ**
**ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

**ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 11794**

«21» հոկտեմբերի 2025թ. ք. Էջմիածին

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ»-ԻՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Վաղարշապատ համայնքի ավագանու 2023 թվականի ապրիլի 28-ի N 33-Ն և 2024 թվականի դեկտեմբերի 25-ի N 110-Ն որոշումները և անհատ ձեռնարկատեր «ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ»-ի հայտը (մուտք՝ 2025 թվականի հոկտեմբերի 17-ի N 7128).

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝**

1. Անհատ ձեռնարկատեր «ԿԱՐԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ»-ին տալ 2025 թվականի հոկտեմբերի 22-ից մինչև նոյեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում Վաղարշապատ համայնքի տարածքում կազմակերպության գովազդի տեղադրման թույլտվություն՝ ըստ ներկայացված հասցեների (Թույլտվություն N 334 կցվում է):

2. Ընդունել ի գիտություն, որ գովազդի տեղադրման թույլտվության համար սահմանված տեղական տուրքը վճարված է:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝** **Ա. ՄԵԼՔԱԿՅԱՆ**